ՍԱՍՈՒՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» հասկացության կարևորությունը և դրա նկատմամբ ուշադրության անհրաժեշտությունը հատկապես պայմանավորված է նրանով, որ՝ ա) սա աշխարհաքաղաքականության մեթոդաբանական նշանակության հասկացություններից է, սրա տեսական-մեթոդաբանական թերմշակության հաղթահարումը ժամանակակից աշխարհաքաղաքականության կարևոր խնդիրներից է, բ) ձևավորվող նոր աշխարհակարգում պետական ռացիոնալ քաղաքականության իրականացումը և ընդհանրապես պետության արդյունավետ գործառնության ապահովումը անհնար է առանց՝

- երկրի ռեսուրսների ուսումնասիրության,
- աշխարհաքաղաքական գործընթացների և պետության ռեսուրսների փոխառնչությունները բացահայտելու,
- պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները արդյունավետ օգտագործելու, դրանք աշխարհաքաղաքական հզորության վերածելու հնարավորությունները գնահատելու,
- պետության առկա աշխարհաքաղաքական հզորության և հնարավոր աշխարհաքաղաքական հզորության տարբերությունը բացահայտելու, դա փոքրացնելու հնարավորությունները գնահատելու,
- պետության աշխարհաքաղաքական անվտանգությունը ապահովելու հնարավորությունները գնահատելու,
- պետության աշխարհաքաղաքական մրցակցության և աշխարհաքաղաքական զարգացման հայեցակարգ մշակելու:

Աշխարհաքաղաքականության ողջ պատմությունը աշխարհաքաղաքական ռեսուրսների վերահսկման և դրա համար պայքարի ուսումնասիրության պատմություն է: Աշխարհաքաղաքականության տարբեր դպրոցների ծնունդն ու գործառնությունը աշխարհաքաղաքական կարգի ու գործընթացների ձևավորման և զարգացման գործում հատկապես այս կամ այն ռեսուրսի կարևորությունն ապացուցելու կամ վիճարկելու արդյունքն է:

«Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» հասկացությունը «ռեսուրսներ» կատեգորիական համակարգի բաղադրիչ է:

«Ռեսուրսները անկախ օգտագործման ժամանակից, որոշակի և անկանխատեսելի խնդիրների լուծման ժամանակ, սովորական, օպտիմալ և էքստրեմալ ռեժիմներում օգտագործման համար հնարավոր և մատչելի, տվյալ պահին հայտնի միջոցների ու դրանց ստացման աղբյուրների ամբողջությունն է» [1, էջ 493-494]:

Ռեսուրսագիտության ուսումնասիրության առարկաների մեջ չկա «աշխարհաքաղաքական ռեսուրսները»: Այս հասկացությունը չկա նաև «Геополитика: Популярная энциклопедия»-ում (Ծ., 2002): Այստեղ ներկայացված են ռեսուրսների հետևյալ տեսակները. քաղաքական, ռազմավարական, դեֆիցիտ ռազմավարական, կրիտիկական ռազմավարական, ռազմատնտեսական, ֆինանսական, արժութային, բնական, հանքային, հանքահումքային, ջրային, հողային, մարդկային, աշխատանքային, ապրանքային, արտահանման, ինֆորմացիոն [1, էջ 494-497]: Սրանցից շատերը ներթափանցում են մեկը մյուսի մեջ կամ մյուսի մաս են կազմում: Իսկ ռեսուրսների առավել ընդունված դասակարգումը ռեսուրսները խմբավորում է «նյութական», «աշխատանքային» և «բնական» հիմնական խմբերում [4, էջ 451]:

«Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները» նոր ձևավորվող հասկացություն է, գիտական գրականության մեջ հազվագյուտ է հանդիպում, դեռևս չի տրված դրա սահմանումը: Այս հասկացության բովանդակության հստակեցման և սահմանման համար, բացի «ռեսուրսներից», կարևոր է նաև «աշխարհաքաղաքականի» բովանդակությունը: Իսկ վերջինիս մասին թեև տարակարծիք են, սակայն, մեր կարծիքով, այն ընդհանուր առմամբ ճիշտ է ներկայացնում «աշխարհաքաղաքականության» առավել տարածված սահմանումը. «աշխարհաքաղաքականությունը գիտություն է տարածության վերահսկողության մասին» [3, էջ 8]: «Տարածության (տարածքի) վերահսկողությունը» «աշխարհաքաղաքականությունը», ինչպես նաև «աշխարհաքաղաքականը» սահմանող (բնութագրող) թեև հիմնական հասկացությունն է, սակայն, մեր կարծիքով, քանի որ անվերջ պայքար է մղվում այդ գործընթացի մասնակիցների՝ աշխարհաքաղաքական սուբյեկտների կողմից՝ իրենց ազդեցության ոլորտները պահպանելու և ընդարձակելու համար, և աշխարհաքաղաքականության բովանդակությունը հնարավոր չէ պատկերացնել առանց այդ մրցակցության հետազոտությունների (որի արդյունքում էլ աշխարհաքաղաքական գրականության մեջ շրջանառվում է «աշխարհաքաղաքական մրցակցություն» հասկացությունը), ուստի «աշխարհաքաղաքականության», ինչպես նաև «աշ-

խարհաքաղաքականի» սահմանման (բնութագրման) համար կարևոր է ոչ միայն «տարածության (տարածքի) վերահսկողությունը», այլև «տարածության (տարածքի) վերահսկողության համար մրցակցությունը»: Վերջիններիս համար կարևոր է նաև վերահսկողության օբյեկտների՝ համաշխարհային տարածության և նրա բաղադրիչների (ենթակարգային միավորների) մասին շեշտադրումը՝ հատկապես այն պատճառով, որ ժամանակակից աշխարհաքաղաքականության մեջ առանձնահատուկ կարևորություն է տրվում աշխարհաքաղաքական տարածության ենթակարգային բոլոր միավորներին, վերահսկողությունը և դրա համար մրցակցությունը վերաբերում է ինչպես համաշխարհային տարածությանն ընդհանրապես, այնպես էլ նրա ենթակարգային բաղադրիչներին:

Այսինքն, «համաշխարհային տարածության և նրա բաղադրիչների վերահսկումն ու դրա համար մրցակցությունը» հենց «աշխարհաքաղաքականը» սահմանող հասկացությունն է և «աշխարհաքաղաքականն» իր բովանդակությունում ունեցող «պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» հասկացության սահմանումը նրա միջոցով տալը, կարծում ենք, ճիշտ է և հիմնավորված:

Հիմք ընդունելով «ռեսուրսների» և «աշխարհաքաղաքականի» մասին վերը շարադրվածը, դա սահմանման մեջ կիրառելու կարևորությունը և «հասկացություն» իմացաբանական հասկացության պահանջները [5, էջ 77-91], փորձենք սահմանել «պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» հասկացությունը: **Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները** համաշխարհային տարածության և նրա բաղադրիչների վերահսկման և դրա համար մրցակցության գործընթացում որոշակի և անկանխատեսելի խնդիրների լուծման համար պետության կողմից օգտագործվելիք հնարավոր և հասանելի, տվյալ պահին հայտնի միջոցների և դրանց ստացման աղբյուրների ամբողջությունն է:

Ակնհայտ է, որ խոսքը գնում է այն ռեսուրսների մասին, որոնք պետության կողմից օգտագործվում են (կամ կարող են օգտագործվել) ենթակարգային տարբեր մակարդակի տարածքների վերահսկման և դրա համար մրցակցության գործընթացում: Ընդ որում, այդ ռեսուրսները օգտագործվում են (կամ կարող են օգտագործվել) ոչ միայն բարձր կարգի (առաջին և երկրորդ) աշխարհաքաղաքական ուժերի, այլև ցածր կարգի ուժերի կողմից: Բարձր կարգի ուժերը իրենց աշխարհաքաղաքական ռեսուրսները օգտագործում են (կամ կարող են օգտագործել) ոչ միայն իրենց ինքնիշխանության պահպանման և ապահովման, այլև տարածաշրջանում կամ ամբողջ աշխարհում միջպետական մրցակցության և ազդեցության ոլորտների ընդլայնման համար: Ցածր կարգի ուժերը (նաև ՀՀ-ն) իրենց աշխարհաքաղաքական սուղ ռեսուրսները հիմնականում

օգտագործում են (պետք է օգտագործեն) աշխարհաքաղաքական բարձր կարգի ուժերի կողմից օգտագործվող աշխարհաքաղաքական այլ ռեսուրսների դեմ հակակշիռների ստեղծման և այդ երկրների աշխարհաքաղաքական էքսպանսիային (մասնավորապես՝ ժամանակակից ձևերին) արդյունավետ դիմագրավելու համար: Իհարկե, դա կախված է երկրում առկա աշխարհաքաղաքական ռեսուրսների քանակական և որակական բնութագրիչներից, ռեսուրսները հզորության վերածելու հնարավորություններից և արդյունավետությունից:

«Աշխարհաքաղաքական ռեսուրսներ» հասկացությունը ներթափանցում է «ռեսուրսներ» կատեգորիական համակարգի տարբեր բաղադրիչ հասկացություններ, որովհետև տարածքների վերահսկման գործընթացները, աշխարհաքաղաքական էքսպանսիայի ձևերը տարբեր են՝ ռազմական, տնտեսական, մշակութային-գաղափարական, ինֆորմացիոն և այլն:

«Աշխարհաքաղաքական ռեսուրսները», ինչպես նաև «ռեսուրս» ընդհանրապես, պատմական կատեգորիաներ են: Այս դեպքում պատմականությունը պայմանավորված է ժամանակի ընթացքում «աշխարհաքաղաքականի» փոփոխման իրողությամբ, իսկ վերջինս՝ մասնավորապես աշխարհաքաղաքական մրցակցության գործընթացում ընդունված մեթոդների և աշխարհաքաղաքական էքսպանսիայի ձևերի պարբերաբար փոփոխմամբ և ավելացմամբ: Աշխարհաքաղաքական էքսպանսիայի ձևերը և դրանք իրականացնող մեթոդների արդյունավետությունը որոշում են նաև աշխարհաքաղաքական ռեսուրսների կարևորությունը: Ավանդական աշխարհաքաղաքական ռեսուրսները, մասնավորապես՝ տարածքն ու նրա բնութագրիչներ աշխարհագրական դիրքն ու բնական ռեսուրսները, համալրվել են նոր բաղադրիչներով, ինչպիսիք են, օրինակ, ֆինանսականն ու գաղափարականը:

Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր, աշխարհաքաղաքական ամենակարևոր ռեսուրսը համարվում է տարածքը: Աշխարհաքաղաքականության համար տարածքի կարևորությունը ֆիքսված է վերջինիս սահմանումներում [7, էջ 22]: Տարածքը որպես աշխարհաքաղաքական ամենակարևոր ռեսուրս համարելու կարևորագույն պատճառն այն է, որ այն լինելով ընդհանրացնող, ինտեգրալ իրողություն, կրում է նաև աշխարհաքաղաքական այլ ռեսուրսներ:

Այժմ օգտագործվում են «էֆեկտիվ աշխարհաքաղաքական տարածություն» և «էֆեկտիվ տարածք» հասկացությունները: Սակայն սրանք դեռևս թերմշակ են՝ առավելությունը տալիս են այս կամ այն գործոնին, օրինակ, «էֆեկտիվ աշխարհաքաղաքական տարածությունը»՝ կոմունիկացիաներին (որոնց ստեղծման համար կարևոր է համարվում կառավարման արդյունավետ

տեխնոլոգիան), «էֆեկտիվ տարածքը»՝ տարեկան միջին ջերմաստիճանին ու ծովի մակարդակից ունեցած բարձրությանը [2, էջ 512]:

Պետական տարածքի՝ որպես աշխարհաքաղաքական ռեսուրսի հիմնական բնութագրիչներն են՝ մեծությունը, աշխարհաքաղաքական դիրքը, աշխարհաքաղաքական նշանակության բնական ռեսուրսները (վառելիքային, մետաղային, ջրային), բնակչության թիվը, էթնիկական և կրոնական կազմը, վարչաքաղաքական կառուցվածքը, տարանցիկ նշանակության ենթակառուցվածքները [6]: Ֆինանսական ռեսուրսների աշխարհաքաղաքական կարևորությունը նոր աշխարհակարգում հատկապես պայմանավորված է տնտեսական մրցակցության աշխարհաքաղաքական նշանակության մեծացմամբ, տնտեսական էքսպանսիայի կարևորությամբ, որի համար առանձնահատուկ նշանակություն ունեն ֆինանսական ռեսուրսները: Սրանք ֆիսկալ քաղաքականության բնութագրիչ և նախադրյալ են, այլ պետություններին տրվող վարկերի ծևով դրանց տնտեսական աճն ու ֆիսկալ քաղաքականության արդյունավետությունը վերահսկելու և փոքրացնելու, առաջին կարգի աշխարհաքաղաքական ուժերից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից այդ պետությունների կախվածությունն ապահովելու միջոց:

Նոր աշխարհակարգում աշխարհաքաղաքական կարևոր ռեսուրս է գաղափարականը, նրա ամենատարածված տեսակ ժողովրդավարությունը: Սակայն ժողովրդավարությունը նաև գաղափարական էքսպանսիա է: Տարբեր են ժողովրդավարության տեսակները և դրանք մարսելու հնարավորությունները: Հաճախ փաթեթային ծևով, արևմտյան առաջադեմ արժեքների անվան տակ, միջազգային կոնվենցիաների միջոցով, որպես միջազգային կազմակերպություններին ինտեգրվելու և դրանցից օգտվելու անհրաժեշտ պայմաններ, հատկապես զարգացման ցածր մակարդակ ունեցողներին է հրամցվում (պարտադրվում) ժողովրդավարության, մեղմ ասած, ոչ լավագույն տեսակը, որի բնութագրիչների մի մասը խոչընդոտող նշանակություն ունի այդ երկրների զարգացման համար:

Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներից կարևոր է նաև սփյուռքը: Առավել ևս բարձր կարգի ուժի կենտրոններում առկա սփյուռքի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այստեղ ընդունված որոշումներով են հիմնականում պայմանավորված ինչպես առանձին մակրոտարածաշրջաններում, այնպես էլ ամբողջ աշխարհում ընթացող գործընթացները (նաև աշխարհաքաղաքական):

Վերը նշված աշխարհաքաղաքական ռեսուրսների կողքին իրենց կարևոր դերը դեռևս պահպանում են ռազմական ռեսուրսները՝ թեև միջազգային

հանրությունը փորձում է միջազգային հարաբերությունները կարգավորող սկզբունքներով և նորմերով փոքրացնել դրանց դերը: Ռազմական ռեսուրսներից աշխարհաքաղաքական կարևոր նշանակություն ունեն (և կունենան նաև հետագայում) հատկապես զանգվածային բնաջնջման զենքի տեսակները, որոնք մեծ դեր ունեն հատկապես ուժերի հավասարակշռության պահպանման գործում:

«Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» կատեգորիական համակարգի հստակեցումը աշխարհաքաղաքականության կարևորագույն տեսական խնդիրներից է, որի լուծումը հնարավորություններ կարող է ստեղծել գործնական և տեսական այլ խնդիրների լուծման համար:

Բացի վերը նշված հասկացություններից, պետության աշխահաքաղաքական ռեսուրսների հետազոտության համար կարևոր են նաև «ռեսուրսների աշխարհաքաղաքական գնահատում», «պետական տարածքի՝ որպես աշխարհաքաղաքական ռեսուրսի բնութագրիչներ», «պետության աշխարհաքաղաքական իրադրություն», «պետության վերահսկում», «պետության վերահսկման մեթոդներ», «աշխարհաքաղաքական էքսպանսիա», «աշխարհաքաղաքական դաշտ», «ազդեցության ոլորտ», «աշխարհաքաղաքական վտանգներ», «աշխարհաքաղաքական սպառնալիքներ», «պետության աշխարհաքաղաքական գործառույթներ», «աշխարհաքաղաքական պրագմատիզմ», «պետության աշխարհաքաղաքական շահեր», «պետության աշխարհաքաղաքական զարգացում» հասկացությունները:

Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսների հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքի ապահովման համար կարևոր են այնպիսի խնդիրների լուծումը և առկա գիտական արդյունքները, հնչպիսիք են՝

- աշխարհաքաղաքական էքսպանսիայի ձևերի և ռեսուրսների փոխառնչությունների բացահայտումը,
- «պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» կատեգորիական համակարգի հստակեցումը, բաղադրիչ հասկացությունների փոխառնչությունների ուսումնասիրությունը,
- աշխարհաքաղաքական էքսպանսիայի ձևերի, դրանք իրականացնող մեթոդների մասին պատկերացումները,
- ռեսուրսների աշխարհաքաղաքական գնահատման մեթոդիկայի մշակումը,
- «ռեսուրսներ» կատեգրիական համակարգի, մասնավորապես՝ «տարածքի»՝ որպես ընդհանրացնող ռեսուրսի մասին առկա պատկերացումները,

- «ռեսուրսաապահովվածություն» և նրա բաղադրիչ հասկացությունների մասին պատկերացումները,

- «ռեսուրսների» տարբեր տեսակների գնահատման մեթոդիկաները և այլն:

Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսների ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն աշխարհաքաղաքականության, այլև ռեսուրսագիտության և սեկյուրիտոլոգիայի՝ կենսագործունեության անվտանգության մասին գիտության համար: Ռեսուրսների այս տեսակի հետազոտության համար կարևոր է ինչպես աշխարհաքաղաքականության, այնպես էլ ռեսուրսագիտության, աշխարհագրության, քաղաքագիտության, տնտեսագիտության, սեկյուրիտոլոգիայի տեսական-մեթոդաբանական ժառանգությունը:

Օգտագործված գրականություն

1. Геополитика: Популярная энциклопедия. Авторы сост. **В. Баришполец, Д. Баришполец, В. Манилов.** Под общей ред. **В. Манилова.** М., 2002.

2. **Дергачев В. А.** Геополитика. Учебник для вузов. М., 2004.

3. Нартов Н. А., Нартов В. Н. **Геополитика. Учебник для студентов вузов. 4-е изд., перераб. и доп. М., 2007.**

4. **Реймерс Н. Ф.** Природопользование. Словарь-справочник. М.,1990.

5. **Բրուտյան Գ. Ա.** Տրամաբանության դասընթաց: Դասագիրք բուհերի համար / [Խմբ.՝ Ռ. Զ. Ջիջյան և ուրիշ.], ԵՊՀ 4-րդ վերամշ. և լրաց. հրատ., Եր., 1987

6. Սարիբեկյան Ս. Լ. **Պետական տարածքի՝ որպես աշխարհաքաղաքական ռեսուրսի հիմնական բնութագրիչները // Օրենք և իրականություն: Միջազգային իրավաբանական գիտական հանդես, Եր., 2010, N 7 (177), էջ 28-31**

7. Սարիբեկյան Ս. Լ. **«Տարածություն», «տարածք» և «պետական տարածք» հասկացություններն ու աշարհաքաղաքականությունը // Օրենք և իրականություն: Միջազգային իրավաբանական գիտական հանդես, Եր., 2010, N 8 (178), էջ 21-22**